ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԼԻԼԻԹ ԽԱՉԱՏՈՒՐԻ

ՀԵՏՎՆԱՍՎԱԾՔԱՅԻՆ ՍԹՐԵՍԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՁԻ «ԵՍ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

ԺԹ.00.01 «Հոգեբանության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Մ Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մելս Պարգևի Մկրտումյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Արսեն Բաղդասարի Լոքյան** հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր **Վարդուհի Ռոբերտի Պապոյան**
Առաջատար կազմակերպություն՝	**ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թ. հունիսի 10-ին՝ ժամը 13:00-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. ապրիլի 30-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝

Կամո Երեմի Վարդանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը Քսանմեկերորդ դարի 90-ական թվականների սկզբին, ինչպես նաև 2020թ-ի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների Արցախյան պատերազմում հայ ժողովուրդը կրեց բազմաթիվ մարդկային կորուստներ: Պատերազմում զոհվածների ու անհայտ կորածների հարազատների համար այդ կորուստները վշտի ապրումներով տեղի են տալիս հետվնասվածքային սթրեսային հոգեվիճակների տեսանելի և քողարկված դրսևորումների (Մկրտումյան Մ. 1998, Մալկինա-Պիխ Ի.2006 և այլն): Ինչպես նշում է Ֆ. Արյեսը՝ «վիշտը զոհվածների հարազատների կյանքում հանգեցնում է էկզիստենցիոնալ դատարկության»[35]: Ի տարբերություն պատերազմում զոհված հարազատներ ունեցող անձանց՝ անհայտ կորածների հարազատները մինչև կյանքի վերջը սպասում են իրենց զինվորին: Բազմաթիվ գիտնականներ իրենց աշխատանքներում նշել են, որ հետվնասվածքային սթրեսի ազդեցությամբ մարդկանց հոգեմարմնական համակարգերում առաջանում են մի շարք նորագոյացություններ (Մկրտումյան Մ. 2004, Արյես Ֆ. 1992, Ախմետովա 2004, Կադիրով Ռ. 2012, Կիտաև-Սմիկ Ա. 1993, Մալկինա-Պիխ 2006, Սուքիասյան Ս. 181,Տարաբրինա Ն. 200): Կորստի հետ կապված փոփոխությունները բազմաթիվ գիտնականներ համարում են անձի «ես» կառուցվածքի գործառնական փոփոխությունների խորքային տեղաշարժեր [19, 21, 27, 44, 51, 88, 94]:

Հիմնախնդրի ուսումնասիրության արդիականությունը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ պատերազմական ժամանակներում, նաև դրանից հետո առաջանում են նորանոր խնդիրներ, որոնք կարիք ունեն ուսումնասիրության նորագույն մոտեցումների: Հիմնախնդրի բազմակողմ հետազոտությունները պատերազմում նորագույն տեխնոլոգիաների կիրառման պայմաններում հնարավորություն կտան բացահայտելու անձի «ես» կառուցվածքի ձևափոխությունների հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները, անհատական առանձնահատկությունների, կոգնիտիվ, հուզակամային զգայաշարժական համակարգերի գործառնական փոփոխությունների յուրահատկությունները:

***Հետազոտության վարկածը*:** Ենթադրվում է, որ պատերազմում անհայտ կորածների ընտանիքի անդամների հետվնասվածքային սթրեսային դրսևորումները հանդիսանում են անձի կոգնիտիվ գործընթացների և հուզական ոլորտի միջև

հավասարակշռության պահպանման մեխանիզմների գործառնական խանգարումներ, որոնք միտված են անձի «ես» կառուցվածքի առանձին բաղադրամասերի ձևափոխումների:

Հետազոտության նպատակն է. ուսումնասիրել Արցախյան պատերազմում անհայտ կորած անձանց հարազատների հետվնասվածքային սթրեսի դրսևորման առանձնահատկությունները, անձի «ես» կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունների յուրահատկությունները:

Հետազոտության օբյեկտը հանդիսանում է պատերազմում անհայտ կորածների ընտանիքի անդամների հետվնասվածքային սթրեսի դրսևորման առանձնահատկությունները:

Հետազոտության առարկան. հետվնասվածքային սթրեսի ազդեցությամբ անձի «ես» կառուցվածքում հոգեբանական տեղաշարժերի առանձնահատկություններն են:

Հետազոտության խնդիրներն են.

1. Հետվնասվածքային սթրեսի հիմնախնդրի տեսական խնդիրների ուսումնասիրությունների վերլուծություն և համակարգում:
2. «Վնասվածք»-ի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրում, «անհայտ կորածների» հարազատների «հետվնասվածքային սթրես»-ի ձևավորման գիտական հիմքերի սահմանում:
3. Հիմնախնդրի վերաբերյալ գոյություն ունեցող գիտական հայացքների համակարգում, հետազոտությունների կիրառականության գիտական կողմերի, դրանց հեռանկարային զարգացման ուղղությունների համակարգում:
4. Հետազոտության իրականացման ռազմավարության մշակում, համապատասխան հետազոտության մեթոդների և համակազմի ընտրություն:
5. Հետվնասվածքային սթրեսը կրող անձանց վնասվածքային փորձի համակարգում, հոգեբանական յուրահատուկ փոփոխությունների հետազոտում:
6. Անձի «Ես» կառուցվածքի առանձին բաղադրամասերի փոփոխության յուրահատկությունների ուսումնասիրում, անձի դրդապատճառների, արժեհամակարգության, հուզակամային, կոգնիտիվ, զգայաշարժական համակարգությունների, տիպաբանական առանձնահատկությունների հետազոտում:
7. Հոգեվերականգնողական աշխատանքների կազմակերպում, մեթոդական

առաջարկությունների և հանձնարարականների առաջադրում:

Հետազոտության համակազմը հետազոտությանը մասնակցել են անցյալ դարի 90-ական թթ. Արցախյան պատերազմում անհայտ կորած և զոհված ազատամարտիկների ընտանիքների 26-72 տարեկան 240 անձինք: Անհայտ կորածների ընտանիքի անդամները հետազոտության համար հանդիսացել են հիմնական խումբ, որոնց թիվը կազմել է 120 մարդ: Որոնցից 40-ը կանայք, 40-ը՝ տղամարդիկ: Հետազոտության գործընթացին մասնակցել են նաև անհայտ կորած անձանց 40 երեխաներ (20 իգ. և 20 ար.), վերջիններս պատերազմի տարիներին եղել են մանկահասակ: Ստուգիչ խմբում նույնպես ընդգրկվել են նույնքան մարդիկ:

Հետազոտության իրականացման պայմանները: Հարազատների հետվնասվածքային փոփոխությունները սահմանվել են որպես **կորստի հետ կապված հոգեբանական վնասվածքի առանձնահատուկ հոգեֆիզիոլոգիական վիճակներ:** Հետազոտությունը իրականացվել է երկու փուլերով: 1-ին փուլում 50 մարդուց բաղկացած ընտրանքի հետ պիլոտային հետազոտությամբ պատկերացում ենք կազմել հիմնախնդրի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների, բացասական հոգեվիճակների բնույթի և այլնի վերաբերյալ: Արդյունքում մշակվել են հետազոտական և վերականգնողական աշխատանքների իրականացման ռազմավարությունը:

2-րդ փուլում, ինչպես հիմնական, այնպես էլ ստուգիչ խմբերում տարիքային, սեռային առանձնահատկությունների հաշվառմամբ, իրականացվել են հետազոտությունների կազմակերպման և իրականացման աշխատանքները: Հետվնասվածքային հոգեվիճակների բացահայտման նպատակով, առանձնացրել ենք նաև հիմնական և ստուգիչ խմբերի «կանանց», «տղամարդկանց» և «երեխաների» հետազոտական խմբեր: Հետազոտության արդյունքների վերլուծություններում հիմնական և ստուգիչ խմբերում ընդգրկված «կանայք», «տղամարդիկ» և «երեխաները» համապատասխանաբար ներկայացվում են պայմանական 1-ին, 2-րդ, 3-րդ խմբերով:

Հետազոտության ընթացքում կիրառվել են դիտման, հոգեբանական զրույցի, հարցազրույցի, հոգեբանական թեստավորման, հոգեբանական վերականգնողական մեթոդներ: Հետազոտության արդյունքների մաթեմատիկական հաշվարկները իրականացվել են վիճակագրական մեթոդների օգնությամբ:

Հետազոտության մեթոդները.

1) Բացասական գործոնների ազդեցության առանձնահատկությունների հարցաթերթիկ: 2)Զ.Դ. Սպիլբերգերի, Յու.Լ. Խանինի «տագնապայության մակարդակի ախտորոշման» մեթոդ [70, էջ 124-126]: 3) Ռ.Բ. Կետելի «16 գործոնային անձնային հարցարան»(C տարբերակ)[38, էջ 140-163]: 4) Մ.Ջ.Հորովիցի,Ն.Վիլների «Վնասվածքային դեպքի ազդեցության գնահատման սանդղակ» [185, էջ 125-139]: 5) Շ. Շվարցի «Արժեքային համակարգության հարցաթերթիկ» մեթոդ [86, էջ 25-129]: 6) Ե..Պ. Իլյինի (Տեպպինգ թեստ) «Զգայաշարժական հատկությունների էքսպրես ախտորոշման մեթոդիկա» [79, էջ 528-530]: 7) Հոգեմկանային վերականգնողական մեթոդներ (Մ.Պ.Մկրտումյանի տարբերակը) [5, էջ 227-245]:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. «Հետվնասվածքային սթրեսի» հիմքում ընկած մարտում զոհված և «անհայտ կորած» զինվորի հոգեբանական հիմնախնդիրը տեսական և գործնական մակարդակներում հանդիսանում է դեռևս վերջնականապես չուսումնասիրված: Հիմնախնդիրը հարազատների համար հանդիսանում է վնասվածքային ծանր եղելություն, տեղեկատվական անորոշության շարունակականություն, հոգեմարմնական վիճակների յուրահատուկ փոփոխություններով զուգակցվող առանձնահատուկ վիճակ:

2.Անհայտ կորածների հարզատների հետվնասվածքային սթրես»-ի ձևափոխումները արտացոլվում են անձի «ես» կառուցվածքում: Հետվնասվածքային սթրեսի ձևափոխումները արտահայտվում են հոգեֆիզիոլոգիական համակարգությունների աշխատունակության ցածր մակարդակներով և ժամանակի ընթացքում կրում են փուլային բնույթ:

3.«Անհայտ կորած» զինվորի հարազատների «հետվնասվածքային սթրես»-ի դրսևորումները հանդիսանում են նաև տեղեկատվական դեֆիցիտի արդյունք: Վնասվածքն իր բովանդակությամբ օրվա տարբեր ժամերին (ցերեկ, գիշեր) ունի դինամիկ փոփոխությունների առանձնահատկություն: Դրանք հանդիսանում են օրգանիզմի ամբողջականության պահպանմանն ուղղված պաշտպանական հակազդումներ՝ արտահայտված տագնապայնության, անորոշ վախերի, մղձավանջային երազների, բացասական հիշողությունների և ապրումների ֆոնով:

4.Անհայտ կորածների հարազատները մշտապես ապրում են բարձր

արտահայտվածությամբ շարունակական տագնապի վիճակում: Ժամանակագրական առումով նրանք գերազանցապես ապրում են անցյալ և ներկա ժամանակների միջև:

5. «Հետվնասվածքային սթրեսային խանգարումները» ունեն քողարկված բնույթ, որոնց բնութագրերը արտահայտվում են անտարբերությամբ, հոգեմարմնական թուլություններով, հոգեկան աշխատունակության ու սթրեսակայունության մակարդակների անկմամբ, կյանքի իմաստի, կենսագործունեության դրդապատճառների, արժեհամակարգի կորստի ձևերով, ինքնագնահատականի ցածր մակարդակով:

6. Զոհված և «անհայտ կորած» զինվորի հարազատների սոցիալ-հոգեբանական վերականգնողական գործընթացը արտահայտվում է վնասվածքային եղելության վերաիմաստավորման, վնասվածքի օբեկտից իրեն հստակ անջատելու, արժեքների վերաիմաստավորման, սոցիալական նոր դիրքի ստանձման կարողունակությամբ:

Հետազոտության գիտական նորույթը:

1. Ուսումնասիրվել և համակարգվել են զոհված և «անհայտ կորած» զինվորի հիմնախնդրի հոգեբանական կառուցվածքում «վնասվածքի», «վնասվածքային սթրեսի» և «հետվնասվածքային սթրեսի» փոխհարաբերակցությունների հաշվեկշիռը, **«զոհված»** անձանց հարազատների հետվնասվածքային սթրեսային խանգարումների յուրահատուկ առանձնահատկությունները: Կորուստ ունեցող հարազատների օրգանիզմում բացահայտված հոգեմարմնական փոփոխությունները սահմանվել են որպես հոգեբանական վնասվածքի առանձնահատուկ հոգեֆիզիոլոգիական վիճակներ:
2. Բացահայտվել են **«անհայտ կորած» և «զոհված» զինվորների** հարազատների «ես» կառուցվածքում հետվնասվածքային սթրեսի ազդեցությամբ յուրահատուկ ձևափոխումները, ինչպես նաև օրգանիզմի հոգեմարմնական համակարգությունների կառուցվածքային բաղադրամասերի փոփոխության յուրահատկությունները:
3. Հետազոտական ճանապարհով բացահայտվել են **«անհայտ կորած»** և **«զոհված» զինվորների** հարազատների հետվնասվածքային սթրեսային խանգարումների (ՀՎՍԽ) տևողության ժամանակագրական և գաղտնի ընթացող փուլերը, դրանցում դրսևորվող հոգեֆիզիոլոգիական հակազդումների հիմնարար բնութագրերը: Բացահայտվել են նաև հարազատների նյարդային համակարգի գործառնական

հնարավորությունների բացասական տեղաշարժերի առանձնահատկությունները (հոգեկան աշխատունակության, հուզական կայունության, կոգնիտիվ գործընթացների համագործակցության):

4. Բացահայտվել են հետվնասվածքային սթրեսային խանգարումներին բնորոշ ձևափոխումների առանձնահատկությունները, անձնային տիպերի, հուզական վիճակների, անձի մոտիվացիոն և արժեհամակարգության փոփոխությունների բնույթը, կորստի սուբյեկտիվ ընկալման և զգացման յուրահատկությունները:

Հետազոտության տեսական նշանակությունը.

- Մասնագիտական գրականության վերլուծության հիման վրա համակարգվել են հետվնասվածքային սթրեսային խանգարումների վերաբերյալ առաջավոր գիտական գաղափարներն ու գործնական հայացքները: Առանձնացվել են հետվնասվածքային հոգեվիճակների ազդեցության ուսումնասիրությունները անձի «ես» կառուցվածքի ձևափոխություններում, որոնք հիմք են հանդիսացել հետազոտման նպատակահարմար ռազմավարության մշակման:
- Հետազոտության արդյունքները կարող են արժեքավոր տեսական և գիտագործնական մշակումներ հանդիսանալ հետվնասվածքային սթրեսի, անձի «ես» կառուցվածքի վրա դրանց ազդեցության առանձնահատկությունների չլուսաբանված հարցերի վերաբերյալ: Հետազոտության տեսական մշակումների արդյունքները կարող են օգտագործվել հետվնասվածքային սթրեսի հիմնահարցերով զբաղվող մասնագետների կողմից իրականացվող հետազոտությունների ռազմավարական ծրագրերի մշակման համար:

Հետազոտության գործնական նշանակությունը.

- մշակվել են հետազոտական աշխատանքների իրականացման ինքնատիպ համակարգ, որը հնարավորություն է տալիս հաջողությամբ կիրառել նմանատիպ համակազմի հետ տարվող ինչպես հետազոտական, այնպես էլ հոգեբանական ուղեկցման, վերահսկման և վերականգնողական աշխատանքներում:
- Մշակվել են նաև հետազոտվող համակազմի հետվնասվածքային սթրեսային խանգարումների կանխարգելման և ուղեկցման հոգեբանական հնարքների համակարգ, որը թույլ է տալիս արդյունավետ կերպով ապահովելու մասնակիցների ընդհանուր և հոգեկան առողջության բացասական փոփոխությունների

վերականգնման գործընթացները:

Հետազոտության համար տեսա-մեթոդաբանական հիմք են հանդիսացել Հ. Սելյեի կենսաբանական սթրեսի տեսության հիմնարար դրույթները [172], Ռ. Ի.Գ.Մալկինա-Պիխի հետվնասվածքային սթրեսի տեսության[129], Խ.Բ. Ախմեդովայի պատերազմների մասնակիցների ու նրանց հարազատների ուշ շրջանում դրսևորվող հետվնասվածքային սթրեսի տեսությունը[39], Պ.Վ.Սիմոնովի հույզերի ծագման և դրսևորման ինֆորմացիոն տեսության հիմնարար գաղափարները [175]:

Հետազոտական աշխատանքները կառուցվել են անձի ամբողջականության և համակարգայնության սկզբունքների հաշվառմամբ: Երևույթների հոգեֆիոլոգիական տեղաշարժերի վերլուծությունը և դրանց հիմնավորումները իրականացվել են պատճառականության գիտական սկզբունքների հիման վրա:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հուսալիությունը ապահովված են հետազոտության մեթոդաբանական հիմքերով, հուսալիության և վալիդության բարձր աստիճան ունեցող մեթոդիկաների համակարգված կիրառմամբ: Հետազոտության արդյունքները պարբերաբար զեկուցվել են ՀՊՄՀ-ի հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի նիստերում, ինչպես նաև միջազգային գիտաժողովներում: Հետազոտության արդյունքները հոդվածների ձևով հրատարակվել են նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից հավատարմագրված առաջավոր գիտական հանդեսներում:

Հետազոտության փորձաքննությունը իրականացվել են «Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների խորհուրդ» հասարակական կազմակերպությունում և «Ապագա» հոգեբանական կենտրոնում: Հետազոտության արդյունքները գիտական առաջարկությունների, խորհրդատվական ուղեցույցների ձևերով ներդրվել են նույն կազմակերպությունների կողմից «Անհայտ կորած ազատամարտիկների» հարազատների հետ տարվող հոգեբանական աշխատանքներում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, 213 անուն հայրենական և օտարալեզու գրականության ցանկից, մեթոդական հանձնարարականներից և 4 հավելվածներից: Հիմնական ծավալը կազմում է 157 էջ, հավելվածի հետ միասին՝ 165 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածական մասում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, առաջադրված է հետազոտության գիտական վարկածը, սահմանված են հիմնական նպատակը, խնդիրները և ուսումնասիրման մեթոդները: Ներկայացված են հետազոտության մեթոդաբանական հիմքերը, տեսագործնական նշանակությունը, նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն ու ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Հետվնասվածքային սթրեսը որպես գիտական քննարկման հիմնախնդիր»** գլուխը նվիրված է քսանմեկերորդ դարի սկզբներին աշխարհում տեղի ունեցող ռազմաքաղաքական զարգացումների պայմաններում առաջացած հիմնախնդիրների վերլուծություններին: Դրանցում վերլուծվում են նաև ՀՀ-ում տեղի ունեցող ռազմա-քաղաքական իրադարձությունների արդյունքում մարդկանց հոգեկան վիճակների փոփոխության պատճառահետևանքային առանձնահատկությունները:

Տեսական վերլուծությունների երկրորդ՝ **«Անձի ես կառուցվածքի հոգեբանական վերլուծությունը»** գլխում քննարկվում են անձի «Ես կոնցեպցիայի» վերաբերյալ առաջավոր գիտնականների հայացքները, հիմնահարցի վերաբերյալ նրանց ընդհանուր պատկերացումները: Անձի «ես» կառուցվածքի վերաբերյալ վերլուծվող գրեթե բոլոր տեսություններում [Ագապով Վ. 2010, Արշավսկի Լ.2008, Կրայգ Գ. 2004, Սլոբոդչիկով Ի. 2009, Խյոլլ Լ. 1997] առկա է այն տեսակետը, որ անձի ինքնագիտակցության զարգացումը անխզելիորեն կապված է ինքնաճանաչման գործընթացի հետ: Հիմնախնդրի տեսական վերլուծություններում կարևորվում են նաև անձի «Ես» կոնցեպցիայի ինքնագնահատականը, որպես հոգեբանական հետազոտության կատեգորիա և հիմնախնդիր: Դրանցում վերլուծվում են հիմնախնդրի գիտագործնական կողմերի տեսական և գործնական հարցերը:

Ատենախոսության երրորդ՝ **«Անհայտ կորածների հարազատների հետվնասվածքային սթրեսի դրսևորման առանձնահատկությունների և անձի «ես» կառուցվածքի փոփոխությունների հետազոտումը»** հիմնական գլխում ընկած են **վնասվածքի ազդեցությամբ «անձի Ես կառուցվածքի» և դրա բազադրիչների հոգեֆիզիոլոգիական բնութագրերի գործառնական փոփոխությունների**

հետազոտման գործընթացները:

Հետազոտվել են հիմնական խումբ հանդիսացող «Անհայտ կորած»-ների հարազատների և ստուգիչ խմբում ընդգրկված անձանց վրա անդրադարձող բացասական գործոնների բազմազանությունը: Մասնակից բոլոր խմբերում խմբավորվել են բացասական գործոնների բնույթը, ազդեցության հաճախականությունը, դրանց նշանակելիությունը: Հետազոտության ընթացքում բացահայտվել են նաև **տարբեր խմբերում ընդգրկված անձանց արժեքային կողմնորոշիչների արտահայտվածությունը:** Արժեքային համակարգության գնահատականներում բացահայտվել են հիմնական և ստուգիչ խմբերին բնորոշ մի շարք օրինաչափություններ, որոնք բնորոշ են ծնողների, կանանց և երեխաների խմբերին: Բացահայտվել են նաև արժեքների գնահատման առաջնահերթությունները:

Հետազոտվել են նաև անհայտ կորած անձանց հարազատների տագնապայնության մակարդակը՝ որպես ամենօրյա կենսագործունեության հուզական ֆոն: Կիրառվել են Ռ.Թեյլորի իրավիճակային և ռեակտիվ տագնապայնության թեստը [157, էջ 89]: Հետազոտության արդյունքների վերլուծությունները ցույց են տալիս, որ հիմնական խմբերում, արտահայտված է տագնապայնության շատ բարձր մակարդակ: Կանանց խմբում իրավիճակային տագնապի մակարդակը գտնվում է սանդղակի շատ բարձրի՝ 58,3 մակարդակում, տղամարդկանցը՝ 54,8 և «երեխաներինը»՝ 46,6: Անձնային տագնապալիությունը կանաց մոտ՝ 55,8, տղամարդկանց մոտ՝ 56,4, երեխաներինը՝ 49,6: Ըստ թեստի պահանջների՝ բարձր տագնապալիությունը համարվում է վնասվածքի ազդեցությամբ ձևավորված հատկություն: Ստուգիչ խմբի կանանց անձնային և իրավիճակային տագնապը գտնվում է միջին մակարդակում (համապատասխանաբար այն կազմում է 42,6, 44,5): Տղամարդկանց խմբում 39,3 անձնային և 43,7 իրավիճակային միջին մակարդակներում: «Երեխաների» խմբում՝ նույնպես միջին մակարդակ, (35,8 և 42,4: Տագնապի այսպիսի ցուցանիշները, ըստ թեստի վերլուծության պահանջների, հանդիսանում են հարմարվածության արդյունք:

Ռ.Բ. Կետելի «անձնային 16 գործոնային հարցարան»-ի միջոցով (C տարբերակ) [38, էջ 140-163] հետազոտվել են նաև անհայտ կորած և զոհված ազատամարտիկների հարազատների անձնային հատկությունները: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ վնասվածքային եղելության ապրումներն ուղղակիորեն անդրադառնում են

անձի «ես» կառուցվածքի անհատական բնութագրերի վրա: Ինչպես հիմնական, այնպես էլ ստուգիչ խմբերի հետազոտության արդյունքները խմբավորվել են ըստ անձնային առանձնահատկությունների արտահայտվածության մեծության: Վերլուծությունները ցույց են տալիս, որ որ հիմնական խմբում ընդգրկված անձանց ցուցանիշներում արտահայտված դրսևորում ունի անձի «ես» կառուցվածի փոփոխության գործոնը: Հետազոտության արդյունքների մանրամասնությունները արտացոլված են ատենախոսության համապատասխան բաժնում:

Աղյուսակ 1

N	Խմբերը		Փորձերի հերթականությունը					
			1	2	3	4	5	$\bar{X}\sum$
1	Կանայք	բ/ք	45	42	42	42	46	
		սխ/ք	19±3,1	27±6,3	29± 5,1	31±4,4	38±1,1	27±4,0
2	Տղամարդիկ	բ/ք	46	41	45	48	46	
		սխ/ք	15±2,2	19±3,3	20±5,9	27±4,4	25±6,2	21±4,3
3	Երեխաներ	բ/ք	57	54	53	554	53,	
		սխ/ք	12±0,3	11±1,1	10±3,6	12±2,2	11±5,2	11±2,5

Ստուգիչ խմբի կանանց, տղամարդկանց և «երեխաների» զգայաշարժական հատկություններ հետազոտության արդյունքները

Անձի շարժունակությունը օրգանիզմի և հոգեկան ոլորտի վերաբերյալ կարևոր բնութագիր է: Չափումներում բացահայտվել են հիմնական և ստուգիչ խմբերի անձանց ինքնակառավարման, ինքնամոբիլիզացման, գործողությունների վերահսկման ունակությունների, զգուշավորության ու ռիսկի, ազարտի դրսևորման առանձնահատկությունները: Ստուգիչ խմբում առաջին «ստուգարքային» գծանշանների թիվը կանանց մոտ կազմում է 45 ± 0,5, սխալների թիվը՝ 19 ± 3,1: Տղամարդկանց մոտ այն կազմում է 46 ± 2,2 (P>0,05), իսկ սխալները՝ 15 ± 2,2, (P<0,001): Երեխաների գրաֆիկական տեպինգ-թեստի քանակը կազմում է 57 ± 1,4 (P>0,05) սխալների թիվը՝ 12 ± 0,3: Հիմնական խմբի հետազոտվողների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս (աղ. 1), որ բարձր տվյալներ են գրանցվել «երեխաների» խմբում: Դրանք, լինելով ստուգիչ խմբին մոտ, բարձր արդյունք համարվել չեն կարող:

Հիմնական խմբի կանանց խմբում առաջին ստուգարքային գործողությունների

միջին մեծությունը կազմում է 36 գծանշում, սխալների թիվը՝ 21 ± 4,2 (P<0.05), տղամարդկանց խմբում այն կազմում է 37 ± 2,1, միջին սխալի մեծությունը կազմում է 18 ± 4,2(P<0.001): «Երեխաների» ցուցանիշները հետևյալն են 42 ± 0.2 գծանշում, 13 ± 3,2: (P<0.001) թույլ տրված սխալների արտահայտվածությամբ: Այսպիսի ցուցանիշները վկայում են երեխաների՝ կյանքին հարմարվածության մասին:

Աղյուսակ 2

N	Խմբերը		Փորձերի հերթականությունը					
			1	2	3	4	5	_X ∑
1	Կանայք	Գծ/ք	36	39	38	39	39	
		սխ/ք	21±4,2	25±3,2	26±4,3	27±3,1	32±4,5	25±3,9
2	Տղամարդիկ	գծ/ք	37	35	39	37	36	
		սխ/ք	18±4,2	21±5,2	23±3,1	28±3,3	29±4, 1	24±4,0
3	Երեխաներ	գծ/ք	42	39	41	43	41	
		սխ/ք	13±3,2	12±1,2	13±3,3	15±4,5	14±3, 1	13±3,4

Հիմնական խմբի կանանց, տղամարդկանց և «երեխաների» զգայաշարժական հատկությունների հետազոտության արդյունքները

Վնասվածքային դեպքի ազդեցության հետազոտությունները իրականացվել են Մ.Ջ. Հորովիցի, Ն. Վիլների վնասվածքային դեպքի ազդեցության գնահատման սանդղակի օգնությամբ [185, էջ 125-139]: **Հետազոտության շրջանակներում վնասվածքը դիտարկում է որպես հոգեվնասվածքային եղելության շարունակական կրկնություն:** Վերլուծությունների շնորհիվ հետազոտվել են հիմնական և ստուգիչ խմբերի անձանց վախերի, կպչուն զգացումների, պատկերների, մտքերի առկայության, գիշերային քնի բովանդակության և այլ բնութագրերի նկարագրեր: **IN,AV,AR,IES-R** գործոնների վերլուծությյան շնորհիվ բացահայտվել են հետազոտվողների ռեակտիվության, դյուրագրգռության, վախի հիպերտրոֆիկ ռեակցիաները, ուշադրության և հիշողության հետ կապված դժվարությունները:



Գծ.նկ. 1

Տարբեր խմբերում ընդգրկված անձանց սթրեսի պայմաններում հոգեկան կայունության և հարմարման դինամիկ առանձնահատկությունների արտահայտվածությունը

Չորրորդ գլխում ներկայացվում են վերականգնողական աշխատանքներից հետո իրականացված չափումների արդյունքները: Արդյունքների վերլուծությունը ցույց է տվել որ ինչպես հիմնական, այնպես էլ ստուգիչ խմբերում դիտարկվում են հետվնասվածքային վիճակների բարենպաստ տեղաշարժեր: Հետազոտվողների օրգանիզմում և հոգեկան համակարգում դանդաղորեն ձևավորվում են բացասական հույզերի համարժեք գնահատման, ուղեկցման, շտկման հետևողական վերաբերմունք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Հետվնասվածքային սթրեսի» շրջանակներում դիտարկվող «անհայտ կորած» համարվող հոգեբանական հիմնախնդիրը տեսական և գործնական մակարդակներում հանդիսանում է վերջնականապես չուսումնասիրված: Հարազատների կյանքում այն ընկալվում է որպես շարունակական վիշտ, իսկ տառապանքի ծանրությունը ժամանակի ընթացքում փոփոխություն չի կրում: Անհայտ կորուստը հարազատների համար հանդիսանում է վնասվածքային ծանր եղելություն, անբավարարվածության, **տեղեկատվական անորոշության շարունակականություն, հոգեմարմնական տհաճ զգացումների, ծանրագույն տառապանքի դինամիկ վիճակ**:

2. «Անհայտ կորած» հիմնախնդրի վնասվածքը հանդիսանում է անձի «ես» կառուցվածքի ձևափոփոխության, ինչպես նաև հոգեմարմնական համակարգությունների գործառնական փոփոխության համալիր գործոն: Անհայտ կորածների ընտանիքի անդամների հետվնասվածքային սթրեսային փոփոխությունները և անձի «Ես» կառուցվածքում դրանց ազդեցության առանձնահատկությունները ուղիղ կախվածություն ունեն անձի կողմից վնասվածքի ընկալման ու իմաստավորման յուրահատկություններից, տեղեկատվական դեֆիցիտի, անորոշության և ժամանակային գործոնների ազդեցության սուբյեկտիվ հաղթահարման առանձնահատկություններից:

3. Կորստի վնասվածքը ծնողների համար հանդիսանում է տագնապալիության բարձր մակարդակով ուղեկցվող, կյանքի իմաստի կորստի, ինքնահաստատման ու ինքնադրսևորման սոցիալ-հոգեբանական դժվար իրականություն, որում տեղի են ունենում անձի ամբողջականության, «Ես կառուցվածքի», ընդհանուր և հոգեկան առողջության հոգեֆիզիոլոգիական բնութագրերի փոփոխություններ: Հարազատի ճակատագրի անհայտությունը **վնասվածքի ապրումը դարձնում է ներքնայնացված ու մնացած խնդիրների նկատմամբ գերակա**: Այն դրսևորվում է հարազատների և միջավայրի հետ փոխհարաբերությունների, հուզական կապերի թուլացմամբ, կոգնիտիվ գործընթացների միջև փոխգործունեություն ապահովող մեխանիզմների ֆունկցիոնալ խախտմամբ:

4. Մայրերն աչքի են ընկնում կորստի մերժմամբ, իրական կյանքի հետ աղճատված սոցիալ-հոգեբանական կապերով: Նրանց կյանքն անցնում է անուրջներով

սնվող սպասումների, ընդգծված կարոտի, գոյության և կյանքի իմաստի արժեզրկման պայմաններում: «Այրիների» ապրումները ունեն քողարկված բնույթ: Չնայած մայրերի ու այրիների միջև գոյություն ունեցող տարիքային տարբերություններին, երկու խմբերում էլ նրանց երջանկության ու կյանքի իմաստի գնահատականները կապված են անցյալ ժամանակի հետ: Տղամարդկանց բնորոշ հակազդումները անհատական են, երկակի: Դրանք զուգակցվում են մշտական տագնապի, անձի համար եսակենտրոն վարքային դրսևորումներով: «Երեխաները» եղելության նկատմամբ նույնպես դրսևորում են երկակի հակազդումներ՝ անորոշության, աղոտ հիշողությունների հիման վրա ձևավորված պատկերացումներ: Հիմնական խմբի «երեխաների» մոտ դիտարկվում է տագնապի, լարվածության հուզական ֆոն, անարդարության արտահայտված զգացում, վառ արտահայտված ինքնուրույնություն:

5. Անհայտ կորածների հարազատների հետվնասվածքային սթրեսը օրգանիզմի գործառութային համակարգերի կենսագործունեության ապահովման մեխանիզմների համագործակցության խափանման առանձնահատուկ հոգեֆիզիոլոգիական վիճակ է: Վարքային փոփոխությունները կրում են փուլային բնույթ: Որպես օրինաչափություն՝ վնասվածք կրողները ապրում են անցյալ ժամանակում: Այն շարունակական է, զարգանում է տեղեկատվական դեֆիցիտի ու անորոշության պայմաններում: Ծնողների մոտ դրսևորվում է դեպի ներս ուղղված հուզական ռեակցիաների բազմազանություն: Հիմնական հետազոտական խմբերում ընդգրկված անձանց հոգեմարմնական փոփոխությունները անձի կառուցվածքում դրսևորվում են շարժումների կառավարման ֆունկցիաների խանգարմամբ, մոբիլիզացիոն կարողությունների, հոգեկան աշխատունակության, ուշադրության ու հիշողության ծավալների նեղացմամբ:

6. Անհայտ կորածների ծնողների և այրիների հոգեկան կայունության և հարմարվողականության պարամետրերին վերաբերվող ինքնագնահատականները արտահայտվում են կայուն ցածր մակարդակում: Դրանք պայմանավորված են հետազոտվող անձանց կողմից վնասվածքի խորը ներքնայնացման, հոգեմարմնական խնդիրների բազմազանության, կորստի հետ չհաշտվելու հանգամանքներով: Այրիները սոցիալական ազատության, ինքնուրույնության առումով՝ մեծ կախվածություն ունեն ընտանիքի անդամներից, բարեկամների կարծիքներից, ընտանեկան ու ազգային ավանդույթներից: Վնասվածքային եղելությունը «երեխաների» համար հանդիսանում է

ծնողներից փոխակերպված և կրում է միջնորդավորված բնույթ: Այն իր ապրումների խորությամբ, երևույթի գնահատմամբ ու նշանակելիությամբ անմիջական չէ, և խիստ տարբերվում է մեծահասակների կողմից երևույթին տրվող գնահատականներից:

7. Ստուգիչ խմբի հետազոտվող անձանց շրջանում, ի տարբերություն հիմնական խմբի, դիտարկվում է վնասվածքային եղելության ընդունում: Այրիները, իրենց հոգու խորքում տանելով վշտի ողջ ծանրությունը, սոցիալ-հոգեբանական «ազատության», ապրումների դրսևորման առումով անհամեմատ անկախ են, քան հիմնական խմբում ընդգրկված այրի կանայք: Նրանց մոտ առկա է վիշտը կրելու յուրօրինակ վիճակ, որում նրանք հաշտվել են իրենց կորստի հետ: Սակայն կորստի ապրումները մինչև վերջ ապրված չեն, ինչը արտահայտվում է նրանց սգավորի ամենօրյա վարքագծում, հուզական ապրումներում, արժեհամակարգության, ընդհանուր և հոգեկան առողջության փոփոխություններում: Անձի «ես» կառուցվածքային փոփոխությունները արտահայտվում են ընդգծված զգուշավորության, զսպվածության ձևերով:

8. Հարազատների սոցիալ-հոգեբանական վերականգնողական գործընթացը հիմնվում է վնասվածքային եղելության վերաիմաստավորման ու վերագնահատման, վնասվածքի օբյեկտից իրեն հստակ անջատելու, արժեքների վերաիմաստավորման, սոցիալական նոր դիրքի ստանձման կարողունակությամբ: Հոգեկարգավորման հնարքների համակարգն ու վերականգնողական աշխատանքների կազմակերպման տակտիկա-տեխնիկական միջոցներն ու ռազմավարական խնդիրների լուծման առաջադրված համակարգը հանդիսանում է «անհայտ կորած»-ի հիմնախնդրով տառապող անձանց հոգեբանական վերականգնման, կենսական պայմաններին հարմարման և դրանցում սոցիալականացման օպտիմալ համակարգ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ տպագիր աշխատանքներում.

1. Ճգնաժամի պայմաններում սովորողների սոցիալական ընկալման փոխակերպումները հոգեբանական անվտանգության բնութագրերում ՀՊՄՀ «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, 1, Երևան-2015թ., էջ՝ 96-104
2. Հետվնասվածքային սթրեսի հոգեֆիզիոլոգիական դրսևորումները որպես անձի ամբողջականության պահպանման հակազդումներ «Գիտական հոդվածների

ժողովածու» ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Գիտակրթական միջազգային կենտրոն Եր.:-Զանգակ, 2015թ., էջ՝ 88-94

3. Արտակարգ իրավիճակներում անձի հոգեբանական անվտանգության ապահովման համակարգը Հայ-Ռուսական Համալսարան Տասներկուերորդ Տարեկան Գիտաժողով, Հոդվածների ժողովածու. Մաս II. - Երևան, ՀՌՀ Հրատարակչություն, 2018- 649 էջ 380-384
4. Հետվնասվածքային սթրեսի ձևափոխումները անձի «ես» կառուցվածքի դրսևորումներում «Բանբեր» պարբերական Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակական համալսարան 2 (45) «Լինգվա» հրատարակչություն Եր.2018 էջ՝ 327-340
5. Հետվնասվածքային սթրեսի դրսևորումները անհայտ կորածների հարազատների ֆունկցիոնալ հնարավորությունների փոփոխություններում Հոգեկան առողջության հայկական հանդես հայկական հոգեբուժական ասոցիացիայի պաշտոնական պարբերական 9 (1) 2018 էջ՝ 17-25
6. Անձի հոգեբանական անվտանգության ապահովման համակարգի գործառնական փոփոխությունների առանձնահատկությունները Գիտական հոդվածների ժողովածու ՀՀ ԳԱԱ, Գիտակրթական միջազգային կենտրոն: Եր.: Նաիրի, 2018.-412 էջ: էջ՝ 147-153:

САРГСЯН ЛИЛИТ ХАЧАТУРОВНА

ОСОБЕННОСТИ ПОСТТРАВМАТИЧЕСКОГО СТРЕССА В “Я” СТРУКТУРЕ ЛИЧНОСТИ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01. Теория и история психологии. Защита диссертации состоится 10 июня 2021.г. в 13:00 ч. на заседании специализированного совета по психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования обусловлена следующими факторами: 1) окончательно не изучены психофизиологические механизмы посттравматических состояний в следствии военных конфликтов, являющимся общим горем среди родных, разного поколения. 2) Недостаточно изучены особенности динамики формирования негативных эмоциональных состояний и психосоматических новообразований, констатирующих глубину переживаний родными и близкими психотравматического опыта. 3) Недостаточно изучено влияние проблем, “погибшего на войне”, а так же “пропавшего без вести” и их психологическое влияние на различные компоненты “Я” структуры личности и на ход изменения индивидуальных особенностей, а так же на функциональных возможностей личности родных и близких. 4) Мало изучены специфика изменения функциональных возможностей когнитивных, эмоционально-волевых, сенсомоторных систем под влиянием имеющих давность травмирующих факторов. 5) Недостаточно изучены процесс восстановления и преодоления негативных посттравматических состояний и ход реабилитационных процессов характеризующих полноценность общего и психического здоровья родных и близких погибших на первой Карабахской войне и лиц “пропавших без вести”.

Цель исследования: изучить особенности и специфику изменения компонентов “Я” структуры личности родных и близких погибших воинов и лиц “пропавших без вести” на первой Карабахской войне.

Теоретическая значимость: анализ теоретического материала может способствовать раскрытию механизмов психологических закономерностей посттравматических

состояний влияющих на ход изменения функциональных характеристик “Я” структуры личности.

Практическая значимость: результаты практических разработок, рекомендации и методические указания дают возможность успешной организации диагностических и психореабилитационных работ с людьми пострадавшими от войны и имевшими личные потери.

Гипотеза исследования. Посттравматическое стрессовое расстройство у членов семей пропавших без вести на войне считается функциональным нарушением когнитивных процессов эмоциональной сферы личности, направленным на изменение определенных компонентов структуры личности человека.

Научная новизна результатов обоснована оригинальным комплексом использованных методов и всесторонним качественным и количественным анализом исследовательских данных касающихся раскрытия механизмов психологических закономерностей посттравматических состояний, влияющих на ход изменения функциональных характеристик компонентов “Я” структуры личности. Выявлены временные характеристики протекания латентных процессов посттравматических стрессовых состояний, а также специфика изменений мотивационных, ценностно-ориентационных, когнитивных, эмоционально-волевых и сенсомоторных систем людей, пострадавших от потери родных и близких на войне.

Структура диссертации. Диссертационная работа изложена на 157 страницах и состоит из введения, 3-х глав, выводов, списка литературы, который содержит 213 источников, методических указаний и 4 приложений.

По теме диссертации опубликовано 6 научных статей.

SARGSYAN LILIT

POST TRAUMATIC STRESS DISORDER MANIFESTATIONS ON PERSON'S SELF CONCEPT

Dissertation to obtain the degree of PhD in Psychological Sciences in Specialty 19.00.01 “Theory and history of psychology”.

The defense of this thesis will be held on June 10, 2021, at 13:00 o’clock, at the session of Specialized Council 064 of Higher Attestation Commission, at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan. Address: 17 Tigran Mets, Yerevan, RA.

SUMMARY

Actuality. The relevance of research is due to the following factors: 1) the psychophysiological mechanisms of post-traumatic conditions as a result of military conflicts, which is a common grief among relatives of different generations, have not been completely studied. 2) Insufficient studies on the features of the dynamics of the formation of negative emotional states and psychosomatic neoplasms, stating the depth of feelings of relatives and friends of the psycho traumatic experience. 3) The influence of the problems "who died in the war", as well as the "missing" and their psychological influence on various components of the "I" of the personality structure and on the course of changes in individual characteristics, as well as on functional capabilities of the personality of relatives and friends. 4) The specificity of changes in the functional capabilities of cognitive, emotional-volitional, sensorimotor systems under the influence of traumatic factors that have a long history has been studied poorly. 5) The process of recovery and overcoming of negative post-traumatic conditions and the course of rehabilitation processes that characterize the usefulness of the general and mental health of relatives and friends of those who died in the first Karabakh war and persons “missing” have been insufficiently studied.

Purpose of the research: to study the peculiarities and specifics of changes in the components of the "I" of the personality structure of relatives and friends of the dead soldiers and "missing" persons in the first Karabakh war.

Theoretical value: the analysis of theoretical material can contribute to the disclosure of the mechanisms of psychological regularities of post-traumatic conditions affecting the course of changes in the functional characteristics of the "I" of the personality structure.

Practical value: the results of practical developments, recommendations and methodological instructions make it possible to successfully organize diagnostic and psycho-rehabilitation works with people who suffered from the war and had personal losses.

Hypothesis of the research. Post-traumatic stress disorder in family members of those missing in war is considered a functional impairment of the cognitive processes of the emotional sphere of the personality, aimed at changing certain components of the personality structure.

The scientific novelty of the results is substantiated by the original complex of the methods used and a comprehensive qualitative and quantitative analysis of research data concerning the disclosure of the mechanisms of psychological regularities of post-traumatic conditions that affect the course of changes in the functional characteristics of the components of the "I" structure of a person. The temporal characteristics of the latent processes of post-traumatic stress states, as well as the specificity of changes in the motivational, value-orientation, cognitive, emotional-volitional and sensorimotor systems of people who suffered from the loss of relatives and friends in the war, were revealed.

The structure. The thesis consists of Introduction, three chapters, Conclusion and Bibliography, methodical instructions and appendices. The overall volume of the research is 157 pages, 165 pages with appendices.

The main results of the research have been published in 6 scientific articles.